Կոնստանտին Օրբելյան

Կոմպոզիտոր, երաժշտագետ, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Ծնվել է 1928թ. Արմավիր քաղաքում:
Երաժշտական ունակություններն ի հայտ են եկել դեռ մանկուց:
Հաճախել է Բաքվի կոնսերվատորիային կից երաժշտական հատուկ դպրոց:
Օրբելյանի ծնողները դարձել են ստալինյան բռնությունների զոհը:
Հորը ձերբակալել են 1936թ., ապա գնդակահարել, իսկ մորը 2 տարի անց ձերբակալել, ապա ուղարկել են հեռավոր ճամբար:

Նրան որպես <<ժողովրդի թշնամու որդի>> հեռացրել են դպրոցից, որից հետո եղբոր հետ տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղի փոքրիկ գյուղերից մեկը:

1942թ. դարձել է ավիացիայի կորպուսի ջազային խմբի դաշնակահար և ակորդեոնահար: Ռազմական նվագախմբի կազմում համերգներով հադես է եկել Երևանում: Ճանաչում է ձեռք բերել և հրավիրվել Հայաստանի էստրադային նվագախումբ:

Արդեն որպես երգահան՝ վերամշակել է ժողովրդական երգեր, ստեղծել նոր մեղեդիներ: Առաջին գործերից է <<Օրորոցայինը>>:

1952թ. հեռացել է էստրադային նվագախմբից և ընդունվել Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան, ապա՝ Երևանի պետական կոնսերվատորիա:

Օպերայի և բալետի թատրոնում 1952-54թթ. աշխատել է որպես կոնցերտմեյստեր, 1954-56թթ. ղեկավարել է Հայկական ռադիոյի գործիքային համույթը:

1956թ. նշանակվել Հայաստանի էստրադային նվագախմբի դիրիժոր և գեղարվեստական ղեկավար:

Հատուկ նվագախմբի համար գրել է <<Դիլիջան>>, <<Համերգային ջազքայլերգ>> պիեսները: 1969թ. գրել է <<Անմահություն>> բալետը:

Հաղթել է 1962թ. Մոսկվայում տեղի ունեցած ԽՍՀՄ երիտասարդ կոմպոզիտորների մրցույթում: 36 տարի գլխավորել է հայ էստրադային համույթը:

Օրբելյանի ղեկավարած նվագախումբը համերգներով հանդես է եկել ջազի հայրենիք ԱՄՆ-ի ավելի քան 25 խոշոր քաղաքներում: Նրա հայտնի երգերը բազմաթիվ կատարողների ներկայացմամբ արժանացել են մի շարք մրցանակների՝ <<Երգել նշանակում է ապրել>>, <<100 երջանիկ ժամեր>>, <<Շնորհակալություն կյանքին>>, <<Սերը չի ծերանում>>, <<Դու այն չես, ով պետք է ինձ>>, <<Հիշեք>> և այլն: 1992թ. մեկնել է ԱՄՆ. ապրում և ստեղծագործում է Լոս Անջելեսում: